DOI: 10.54503/1829-4324.2023.1-58

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱՒՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀՀ–ՈՒՄ

Եվգենյա Արտաշեսի Հակոբյան
Անահիտ Խաչատուրի Մարկոսյան

Հոդվածը ստացվել է՝ 08.02.23, ուղարկվել է գրախոսման՝ 14.03.23, երաշխավորվել է տպագրության՝ 08.05.23

Ներածություն: Լինելով ՀՀ ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներից մեկը՝ հանքարդյունաբերության ոլորտն ունի նաև բացասական հետևանքներ: Ուստի ***արդիական*** է և անհրաժեշտություն է ներկայացնում ՀՀ կառավարության կողմից վերջինիս նվազեցմանն ուղղված միջոցառումների և օրենսդրական կարգավորումների ուսումնասիրությունը, ինչումն էլ կայանում է հոդվածի ***նպատակը***: Տվյալ նպատակին հասնելու համար հոդվածում առաջադրվել են հետևյալ ***խնդիրները***՝

- Ուսումնասիրել հանքարդյունաբերության ոլորտի ազդեցությունների կարգավորման օրենսդրական մեխանիզմները ՀՀ–ում,
- վեր հանել դրանցում առկա բացթողումները և մշակել առաջարկություններ դրանց վերացման ուղղությամբ:

Գրականության վերլուծություն: Գրականության մեջ վաղուց է խոսվում հանքարդյունաբերության վնասակար հետևանքների մասին: Դեռևս 2001 թվականին լույս է տեսել ծավալուն մի աշխատություն, որում զետեղված շուրջ 996 հոդվածներում և համառոտագրերում անդրադարձ է կատարվում 1965-2001 թվականների ընթացքում տարբեր երկրներում մարդկանց առողջության վրա հանքարդյունաբերության թողած վնասակար հետևանքներին[1]:

Ինչպես նկատում են Ն Հեդվեյը, Ջ. Սթիվենը և այլոք, հանքարդյունաբերության ոլորտի բացասական հետևանքները սկսում են հանքի շահագործման պահից, և չեն դադարում նույնիսկ այն ժամանակ, երբ հանքը փակվում և դադարում են շահագործման աշխատանքները: Դրանք բավականին երկարաժամկետ են, ունենում են ուղղակի և անուղղակի բնույթ և ազդում են սոցիալական և բնապահպանական համակարգերի վրա[2]:

Դ.Լորենսը նշում է, որ հանքարդյունաբերությունը կարելի է համարել կայուն զարգացող, եթե այն անվտանգ է, ունի շրջակա միջավայրի կառավարման և համայնքի ներգրավվածության առաջատար փորձ, տնտեսապես ամուր է և որը

---

[1] Carolyn Stephens & Mike Ahern London School of Hygiene & Tropical Medicine, Worker and Community Health Impacts Related to Mining Operations Internationally, https://www.iied.org/sites/default/files/pdfs/migrate/G01051.pdf

[2] Haddaway et al. Environ Evid (2019) 8:9 https://environmentalevidencejournal.biomedcentral.com/counter/pdf/10.1186/s13750-019-0152-8.pdf?pdf=button%20sticky, https://doi.org/10.1186/s13750-019-0152-8

շատ կարևոր է, հանքային ռեսուրսները օգտագործվում են արդյունավետ[1]:

Ռ.Բաթերհամը հանքարդյունաբերական ընկերությունների համար շրջակա միջավայրի պահպանությունը համարում է կարևորագույն արժեքներից մեկը: Իսկ ոլորտում գործունեություն իրականացնող ընկերությունների գործողությունները պետք է լինեն հստակ, տեսանելի և վստահելի աշխատողների, շրջակա համայնքների և ավելի լայն շրջանակների շահագրգիռ կողմերից[2]:

Ջ.Լ.Գոնսալեսն ու այլոց կողմից կատարած հետազոտության շրջանակներում նշվում է, որ հանքարդյունաբերության կայուն զարգացումը կարևոր մտահոգություն է ոլորտի ընկերությունների համար, քանի որ այն ներառում է բազմաթիվ բնապահպանական, սոցիալական և տնտեսական մոտեցումներ[3]:

Հանքարդյունաբերական բազմաթիվ երկրներ իրականացնում են շրջական միջավայրի վրա ազդեցության գնահատումներ որպես տվյալ գործունեության անբաժան և կարևոր մասի: Ըստ Կ.Ռ.Մորգան–ի աշխարհի 193 երկրներից 191–ում տարբեր ձևերով իրականացվում է շրջակա միջավայրի ազդեցության գնահատում[4]:

Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ փաստաթղթերի շարք է պատրաստվել Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի «Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն» (ՀՕԲՆ) ծրագրի շրջանակներում 2017 թվականին[5]: Այն իր մեջ ներառում է հանքարդյունաբերական թափոնների դասակարգման և կառավարման, ինչպես նաև բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատումները ՀՀ–ում և աշխարհի տարբեր երկրներում:

Մեթոդաբանություն: Հոդվածում առաջադրված խնդիրները լուծվել են նկարագրական, տվյալների հավաքագրման, համեմատական, վերլուծական մեթոդներով:

Վերլուծություն: Խոսելով հանքարդյունաբերության ոլորտի տնտեսական օգուտների մասին, հարկ է հաշվի առնել նաև բնապահպանական ու առողջապահական հետևանքները, որոնք ի հայտ են գալիս հանքերի շահագործման արդյունքում: Հանքարդյունաբերական արտադրանքը իր կիրառությունն է ունենում տարբեր բնագավառներում, և անկասկած, երկրի տնտեսության զարգացման հա-

---

[1] David Laurence, Establishing a sustainable mining operation: an overview, Journal of Cleaner Production Volume 19, Issues 2–3, January–February 2011, Pages 278-284 https://doi.org/10.1016/j.jclepro.2010.08.019 https://www.sciencedirect.com/science/article/abs/pii/S0959652610003471?via%3Dihub,

[2] Robin Batterham, Lessons in Sustainability from the Mining Industry https://www.sciencedirect.com/science/article/pii/S1877705814010959

[3] Environmental Management Strategies in the Copper Mining Industry in Chile to Address Water and Energy Challenges—Reviewhttps://www.mdpi.com/2673-6489/2/2/12,

[4] Richard K. Morgan (2012) Environmental impact assessment: the state of the art, Impact Assessment and Project Appraisal, 30:1, 5-14, DOI: 0.1080/14615517.2012.661557

[5] Վիվոդա, Վ. և Ֆուլչեր, Ջ. (2017): Հանքարդյունաբերական թափոնների դասակարգում և կառավարում (Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ փաստաթղթերի շարք, Աշխատանքային փաստաթուղթ 1, Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն), ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն: Հայաստանի ամերիկյան համալսարան (Երևան, Հայաստան): Ներբեռնված է հետևյալ էլ. հասցեից՝ http://mlri.crm.aua.am:

մար ունի նշանակալի դերակատարում: Սակայն ոլորտում իրենց գործունեությունը ծավալող կազմակերպությունները հասարակության շրջանում պետք է երաշխիքներ տրամադրեն առ այն, որ օգտակար հանածոներն ու մետաղները արտադրվում են պատասխանատու կերպով, հանքերի շահագործումն անվտանգ է, և որևէ կերպ վնաս չի հասցնում բնակչությանը[1]: ՀՀ Առողջապահության ազգային ինստիտուտի կողմից յուրաքանչյուր տարի կազմվում և ներկայացվում է Առողջապահական համակարգի գործունեության զեկույցներ[2], որոնցում ներկայացվում է ՀՀ–ում տարբեր պատճառներից մահացության ցուցանիշը, վերլուծվում է դինամիկան: Սակայն որևէ վերլուծություն չի իրականացվում պարզելու, թե հանքարդյունաբերության ոլորտում աշխատողների և հարակից բնակավայրերի բնակիչների մոտ ինչպիսի հիվանդություններն են գերակշռում: Վերջինս, ինչպես վկայում է շատ երկրների փորձը, թույլ կտար պատկերացում կազմելու մարդկանց առողջության վրա հանքարդյունաբերության հասցրած վնասակար հետևանքների մասին և իրականացնելու որոշակի միջոցառումներ: Իսկ ինչպես նշված է 2022 թվականի զեկույցում, բնակչության առողջությունը պայմանավորված է ոչ միայն առողջապահության համակարգի գործունեությամբ, այլև շրջակա միջավայրի վիճակով և բնակչության առողջապահական վարքով: Այդ ոլորտները դուրս են գտնվում առողջապահության համակարգի կառավարման ոլորտից[3]: Կարծում ենք, որ ոչ միայն առողջապահական համակարգն, այլ նաև կառավարության համապատասխան ենթակառուցվածքները համապատասխան օրենսդրական հիմքերով պետք է աջակցեն տվյալ խնդրի լուծմանը: Նշենք նաև, որ Հայաստանի Հանրապետությունում առողջության, ինչպես նաև սոցիալական ազդեցության գնահատումների առումով լուրջ հիմնախնդիր և բացթողում է հանդիսանում ուղեցույցների բացակայությունը:

Ինչպես արդեն նշեցինք, հանքարդյունաբերությունն իր բացասական հետևանքներն է թողնում նաև շրջակա միջավայրի վրա: Ներկա պահի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում բացակայում է այդ մասին միասնական համակարգված իրավական որևէ ակտ: Նախկինում ՀՀ–ում գործում էր բնապահպանական և բնօգտագործման մասին ՀՀ օրենքը[4], որով սահմանվում էին բնապահպանական վճար, բնօգտագործման վճար հասկացությունները, այդ վճարների տեսակները, դրույքաչափերը, վճարման կարգը: Սակայն 2018 թվականի հունվարի մեկից օրենքն ուժը կորցրած է ճանաչվել: Նշենք նաև, որ օրենսդրական հիմքով ներկայումս գործում է «Ընկերությունների կողմից վճարվող

---

[1] https://www.icmm.com/en-gb/mining-metals

[2] Առողջապահության ազգային ինստիտուտի պաշտոնական կայք էջ, https://nih.am/am/publications/report_yearbook_guide/1?block=admission_type_deadlines

[3] Առողջապահության համակարգի գործունեության գնահատում, Հայաստան 2022 / Ա 720 Դ. Անդրեասյան, Ա. Բազարչյան, Ս. Մանուկյան.- Եր.: ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ, 2022.- էջ 8: https://nih.am/assets/pdf/atvk/6e8b1710e72fc3881ca5228514011acc.pdf,

[4] ՀՀ օրենքը բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին, Ընդունված է Ազգային ժողովի կողմից 28 դեկտեմբերի 1998 թ. ՀՕ-270, ՀՀՊՏ 1998.12.31/33(66) https://www.arlis.am/documentview.aspx?docid=73116

բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքը, որով կարգավորվում են ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկից ազդակիր համայնքներին բնապահպանական ծրագրերի իրականացման համար մասհանումների տրամադրման կարգը, բնապահպանական ծրագրի նախագծի մշակման և հաստատման, ինչպես նաև այդ ծրագրով նախատեսված միջոցառումներն ու ուղղությունները[1]: Հարկ է նշել, որ տվյալ օրենքում 25.05.2022 թ. կատարվեցին փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտել 2023 թվականի հունվարի 01-ից, և ըստ որոնց առավել ընդլայնվել է հոդված 3-ը և համալրվել է շրջակա միջավայրի պահպանության գծով նախագծային, կիրառական, հետազոտական և փորձարարական աշխատանքների, շրջակա միջավայրի վրա ներգործության հետազոտությունների կամ ուսումնասիրությունների իրականացման նոր միջոցառումներով[2]: Կարծում ենք, որ սա բավականին գործուն քայլ է՝ ուղղված ոլորտին հասցրած բնապահպանական վնասների նվազեցման և բնօգտագործման վճարների առավել նպատակային օգտագործման ուղղությամբ: Այն պետք է կրի շարունակական բնույթ և խստացվի դրա կատարման նկատմամբ վերահսկողությունը: Դրանց իրականացումը կբարձրացնի նաև ազդակիր համայնքների վստահության մակարդակը գործող կազմակերպությունների գործունեության անվտանգության, ինչպես նաև հատկացվող գումարների արդյունավետ օգտագործման հանդեպ, ինչպես նաև կխթանի տեղական նշանակության բնապահպանական ծրագրերի կատարման շահագրգռվածությունն ու արդյունավետությունը: Հարկ է նշել, որ ՀՀ–ում այժմ գործում է ՀՀ օրենքը թափոնների մասին[3] և ՀՀ ընդերքի մասին օրենսգիրքը[4], որոնք, սակայն շարադրված են շատ ընդհանրական ձևով: Ավելին, թափոնների մասին ՀՀ օրենքի հոդված 22-ը[5] վերաբերում է Շրջակա միջավայրում թափոնների տեղադրման համար բնապահպանական վճարներին, որոնք սահմանվում են բնապահպանական վճարներ՝ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան[6], որը ուժը կորցրած է ճանաչվել 2018 թվականի հունվարի 1-ից: Կարծում ենք, որ համապատասխան օրենսդրական ոչ հստակ և ոչ լիարժեք դաշտի առկայությունը մեծ հիմնախնդիր է ոլորտի

[1] ՀՀ օրենքը «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, Ընդունված է 2022 թվականի մայիսի 25-ին, ՀՕ-145-Ն https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=164449

[2] Նույն տեղում, հոդված 3, 7-րդ կետ

[3] ՀՀ օրենքը թափոնների մասին, Ընդունված է 2004 թվականի նոյեմբերի 24-ին, ՀՕ-159-Ն, ՀՀՊՏ 2004.12.28/72(371) Հոդ.1480 https://www.arlis.am/documentview.aspx?docid=1722

[4] ՀՀ օրենքը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում լրացում կատարելու մասին, Ընդունված է 2022 թվականի մայիսի 25-ին, ՀՕ-142-Ն, https://www.arlis.am/documentview.aspx?docid=164450

[5] ՀՀ օրենքը թափոնների մասին, Ընդունված է 2004 թվականի նոյեմբերի 24-ին, ՀՕ-159-Ն, ՀՀՊՏ 2004.12.28/72(371) Հոդ.1480 https://www.arlis.am/documentview.aspx?docid=1722, Հոդված 22

[6] ՀՀ օրենքը բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին, Ընդունված է Ազգային ժողովի կողմից 28 դեկտեմբերի 1998 թ. ՀՕ-270, ՀՀՊՏ 1998.12.31/33(66) https://www.arlis.am/documentview.aspx?docid=73116

կարգավորման գործում, և, հետևաբար նաև իր բացասական հետևանքն է ունենում շրջակա միջավայրի պահպանության ապահովման մեջ:

Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն ու փորձաքննությունը կարգավորվում է համապատասխան օրենքով[1]: Գնահատման և փորձաքննության նպատակն է շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հիմնադրույթային փաստաթղթի և նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը[2]: Սակայն նշենք, որ մինչ օրս ՇՄԱԳ գործընթաց է իրականացվել Լիդիան Ինթերնեյշնլ ընկերության Ամուլսարի ոսկու հանքի նախագծի համար: Կարծում ենք, որ նման հետազոտությունների սակավությունը հիմնականում առկա ուղեցույցների և մեթոդական ցուցումների բացակայության հետևանք է: Հայաստանի Հանրապետությունում այժմ բավականին սակավ են նաև վերահսկողության ինստիտուտները:

ՀՀ կառավարության կողմից 2015 թվականի հունիսի 23-ին ընդունվել է «Ալյոտիգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության առաջարկած և հիմնավորած գործողությունների համալիր. Ողջիի, Փխրուտի, Արծվանիկի պոչամբարներում կուտակված և կուտակվող, ինչպես նաև «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության գործունեության արդյունքում գոյացած և գոյացող արտադրական լցակույտերի մշակման ներդրումային ծրագրի մասին օրենքը[3], որն ուղղված էր նշված արտադրական լցակույտերի մշակման տեխնոլոգիայի ներդրմանն ու կիրառմանը և այդ նպատակով գործարանի կառուցմանն ու շահագործմանը[4]: Սակայն տվյալ ընկերությունը 2016 թվականին սնանկ ճանաչվեց, և, փաստորեն, խնդիրը նորից մնաց չլուծված: Սա կարելի է համարել պետության կողմից խնդրի լուծմանն ուղղված առաջին քայլերից մեկը, սակայն, կարծում ենք, որ այն պետք է մշակվի և ներկայացվի ոչ թե կոնկրետ մեկ ընկերության համար, այլ օրենսդրական հիմքով սահմանվեն ընդհանուր նորմեր, որոնց հիման վրա էլ հետագայում կկազմակերպվեն համապատասխան մրցույթներ (տենդերներ), և մրցույթը հաղթած կազմակերպությունն էլ կիրականացնի համապատասխան պոչամբարների վերամշակման ծրագիրը:

Գիտական նորույթ: Ուսումնասիրելով ՀՀ շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա հանքարդյունաբերության ոլորտի թողած բացասական հետևանքների մեղմման օրենսդրահիրավական դաշտը, վեր են հանվել դրանցում

---

[1] ՀՀ օրենքը շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին, Ընդունված է 2014 թվականի հունիսի 21-ին https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=91594

[2] Նույն տեղում, հոդված 6

[3] ՀՀ օրենքը Ողջիի, Փխրուտի, Արծվանիկի պոչամբարներում կուտակված և կուտակվող, ինչպես նաև «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության գործունեության արդյունքում գոյացած եվ գոյացող արտադրական լցակույտերի մշակման ներդրումային ծրագրի մասին, Ընդունված է 2015 թվականի հունիսի 23-ին https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=99178

[4] Նույն տեղում

առկա բացթողումները (հիմնախնդիրները) և առաջարկվել են դրանց վերացմանն (լուծմանն) ուղղված միջոցառումներ։

Եզրակացություններ։ Ուսումնասիրելով պետության կողմից շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա հանքարդյունաբերության թողած բացասական հետևանքների մեղմացմանն ուղղված միջոցառումները, հանգեցինք այն եզրակացության, որ թերի և ոչ հստակ օրենսդրական դաշտը այն հիմնական պատճառն է, որ ոլորտում առկա են շատ բացթողումներ։ Ներկա պահի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությունները կրում են շատ ընդհանրական բնույթ և ունեն հստակեցման խնդիր։ Բացակայում է թափոնների և բացասական հետևանքների նվազեցման միասնական իրավական ակտ, ինչը անթույլատրելի է, և ոլորտի կարգավորման մեջ համարվում է լրջագույն խնդիրներից մեկը։ Կարծում ենք, առաջին փուլով նախ պետք է մշակվի հստակ օրենք, որը սահմանում է հանքերի անվտանգ շահագործման պայմանների խախտման համար սահմանված տույժ ու տուգանքները, ստեղծվի հատուկ վերահսկողական գործառույթներ իրականացնող մարմին, որն էլ անաչառ ձևով որոշակի պարբերականությամբ կիրականացնի մշտադիտարկումներ և վեր կհանվի հանքերի անվտանգ շահագործման նորմերի անհամապատասխանությունները, իսկ դրանց ժամանակին բացահայտումն ու շտկումը թույլ կտա հետագայում խուսափել ավելի մեծ խնդիրներից։ Ինչ վերաբերում է թափոնների կուտակման պոչամբարներին, ապա դրանց լուծման միակ խնդիրը կայանում է նրանում, որ պետության կողմից օրենսդրական հիմքով սահմանվեն պոչամբարների վերամշակման նորմեր ու սահմանվեն նմանատիպ ծրագրերին աջակցության միջոցառումներ (սակայն ոչ թե կոնկրետ ընկերության համար, ինչպես արդեն նշել էինք վերևում), ինչն էլ իր հերթին որոշակի չափով կլուծի բնապահպանական խնդիրներն ու կստեղծի տնտեսական նոր հնարավորություններ, քանի որ պոչամբարներում առկա են բավականին հանքանյութեր, որոնք չեն կորզվում և, փաստորեն, կորստի են մատնվում։

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ օրենքը «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, Ընդունված է 2022 թվականի մայիսի 25-ին, ՀՕ-145-Ն
2. ՀՀ օրենքը բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին, Ընդունված է Ազգային ժողովի կողմից 28 դեկտեմբերի 1998 թ. ՀՕ-270, ՀՀՊՏ 1998.12.31/33(66),
3. ՀՀ օրենքը թափոնների մասին, Ընդունված է 2004 թվականի նոյեմբերի 24-ին, ՀՕ-159-Ն, ՀՀՊՏ 2004.12.28/72(371) Հոդ.1480,
4. ՀՀ օրենքը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում լրացում կատարելու մասին, Ընդունված է 2022 թվականի մայիսի 25-ին, ՀՕ-142-Ն,
5. ՀՀ օրենքը շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին, Ընդունված է 2014 թվականի հունիսի 21-ին,

6. ՀՀ օրենքը Ողջիի, Փխրուտի, Արծվանիկի պոչամբարներում կուտակված և կուտակվող, ինչպես նաև «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության գործունեության արդյունքում գոյացած և գոյացող արտադրական լցակույտերի մշակման ներդրումային ծրագրի մասին, Ընդունված է 2015 թվականի հունիսի 23-ին,
7. Անդրեասյան Դ., Բազարչյան Ա., Մանուկյան Ս.Առողջապահության համակարգի գործունեության գնահատում, Հայաստան 2022 / Ա 720.- Եր.: ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ, 2022.-243 էջ: https://nih.am/assets/pdf/atvk/6e8b1710e72fc3881ca5228514011acc.pdf
8. Վիվոդա, Վ. Ֆուլչեր, Ջ. (2017): Հանքարդյունաբերական թափոնների դասակարգում և կառավարում (Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ փաստաթղթերի շարք, Աշխատանքային փաստաթուղթ 1, Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն), ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն: Հայաստանի ամերիկյան համալսարան (Երևան, Հայաստան):
9. Carolyn Stephens & Mike Ahern London School of Hygiene & Tropical Medicine, Worker and Community Health Impacts Related to Mining Operations Internationally, 2001, https://www.iied.org/sites/default/files/pdfs/migrate/G01051.pdf
10. David Laurence, Establishing a sustainable mining operation: an overview, Journal of Cleaner Production Volume 19, Issues 2–3, January–February 2011, Pages 278-284 https://doi.org/10.1016/j.jclepro.2010.08.019
11. Environmental Management Strategies in the Copper Mining Industry in Chile to Address Water and Energy Challenges—Reviewhttps://www.mdpi.com/2673-6489/2/2/12,
12. González J. L. , Onederra I. Environmental Management Strategies in the Copper Mining Industry in Chile to Address Water and Energy Challenges—Review, https://www.mdpi.com/2673-6489/2/2/12
13. Haddaway et al. Environ Evid (2019) https://environmentalevidencejournal.biomedcentral.com/counter/pdf/10.1186/s13750-019-0152-8.pdf?pdf=button%20sticky, https://doi.org/10.1186/s13750-019-0152-8 https://www.sciencedirect.com/science/article/abs/pii/S0959652610003471?via%3Dihub,
14. https://www.sciencedirect.com/science/article/pii/S1877705814010959
15. Laurence, D. Establishing a sustainable mining operation: An overview. J. Clean. Prod. 2011, 19, 278–284, https://www.sciencedirect.com/science/article/abs/pii/S0022437505000022
16. Richard K. Morgan (2012) Environmental impact assessment: the state of the art, Impact Assessment and Project Appraisal, 30:1, 5-14, DOI: 10.1080/14615517.2012.661557
17. https://www.icmm.com/en-gb/mining-metals
18. https://nih.am/am/publications/report_yearbook_guide/1?block=admission_type_deadlines

References

1. HH o'renqy' «Y'nkerowt'yownneri koghmic vtwarvogh bnapahpanakan harki npatakayin o'gtagorc'man masin» o'renqowm p'op'oxowt'yown katarelow masin, Y'ndownvac' e' 2022 t'vakani mayisi 25-in, HO'-145-N
2. HH o'renqy' bnapahpanakan & bno'gtagorc'man vtwarneri masin, Y'ndownvac' e' Azgayin jhoghovi koghmic 28 dektemberi 1998 t'. HO'-270, HHPT 1998.12.31/33(66),
3. HH o'renqy' t'ap'onneri masin, Y'ndownvac' e' 2004 t'vakani noyemberi 24-in, HO'-159-N, HHPT 2004.12.28/72(371) Hod.1480,
4. HH o'renqy' HH y'nderqi masin o'rensgrqowm lracowm katarelow masin, Y'ndownvac' e' 2022 t'vakani mayisi 25-in, HO'-142-N,
5. HH o'renqy' shrjaka mijavayri vra azdecowt'yan gnahatman ev p'ord'aqnnowt'yan masin, Y'ndownvac' e' 2014 t'vakani hownisi 21-in,
6. HH o'renqy' Oghjii, P'xrowti, Arc'vaniki pochambarnerowm kowtakvac' ev kowtakvogh, inchpes na& «Zangezowri pghnd'amolibdenayin kombinat» p'ak bajhnetirakan y'nkerowt'yan gorc'owneowt'yan ardyownqowm goyacac' ev goyacogh artadrakan lcakowyteri mshakman nerdrowmayin c'ragri masin, Y'ndownvac' e' 2015 t'vakani hownisi 23-in,
7. Andreasyan D., Bazarchyan A., Manowkyan S.Ar'oghjapahowt'yan hamakargi gorc'owneowt'yan gnahatowm, Hayastan 2022 / A 720.- Er.: HH AN «Akademikos S. Avdalbekyani anvan Ar'oghjapahowt'yan azgayin institowt» P'BY', 2022.-243 e'j: https://nih.am/assets/pdf/atvk/6e8b1710e72fc3881ca5228514011acc.pdf
8. Vivoda, V. Fowlcher, J. (2017): Hanqardyownaberakan t'ap'onneri dasakargowm & kar'avarowm (Mijazgayin lavagowyn p'ord'i veraberyal p'astat'ght'eri sharq, Ashxatanqayin p'astat'owght' 1, Hanqardyownaberowt'yan o'rensdrowt'yan barep'oxman naxad'er'nowt'yown), HAH Patasxanatow hanqardyownaberowt'yan kentron: Hayastani amerikyan hamalsaran (Er&an, Hayastan):
9. Carolyn Stephens & Mike Ahern London School of Hygiene & Tropical Medicine, Worker and Community Health Impacts Related to Mining Operations Internationally, 2001, https://www.iied.org/sites/default/files/pdfs/migrate/G01051.pdf
10. David Laurence, Establishing a sustainable mining operation: an overview, Journal of Cleaner Production Volume 19, Issues 2–3, January–February 2011, Pages 278-284 https://doi.org/10.1016/j.jclepro.2010.08.019
11. Environmental Management Strategies in the Copper Mining Industry in Chile to Address Water and Energy Challenges—Reviewhttps://www.mdpi.com/2673-6489/2/2/12,
12. González J. L. , Onederra I. Environmental Management Strategies in the Copper Mining Industry in Chile to Address Water and Energy Challenges—Review, https://www.mdpi.com/2673-6489/2/2/12

13. Haddaway et al. Environ Evid (2019) https://environmentalevidencejournal.biomedcentral.com/counter/pdf/10.1186/s13750-019-0152-8.pdf?pdf=button%20sticky, https://doi.org/10.1186/s13750-019-0152-8 https://www.sciencedirect.com/science/article/abs/pii/S0959652610003471?via%3Dihub
14. https://www.sciencedirect.com/science/article/pii/S1877705814010959
15. Laurence, D. Establishing a sustainable mining operation: An overview. J. Clean. Prod. 2011, 19, 278–284, https://www.sciencedirect.com/science/article/abs/pii/S0022437505000022
16. Richard K. Morgan (2012) Environmental impact assessment: the state of the art, Impact Assessment and Project Appraisal, 30:1, 5-14, DOI: 10.1080/14615517.2012.661557
17. https://www.icmm.com/en-gb/mining-metals
18. https://nih.am/am/publications/report_yearbook_guide/1?block=admission_type_deadlines

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀՀ–ՈՒՄ

Եվգենյա Արտաշեսի Հակոբյան
Անահիտ Խաչատուրի Մարկոսյան

Համառոտագիր: Լինելով ՀՀ ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներից մեկը՝ հանքարդյունաբերության ոլորտն ունի նաև բացասական հետևանքներ: Ուստի *արդիական* է և անհրաժեշտություն է ներկայացնում ՀՀ կառավարության կողմից վերջինիս նվազեցմանն ուղղված միջոցառումների և օրենսդրական կարգավորումների ուսումնասիրությունը, ինչումն էլ կայանում է հոդվածի *նպատակը*: Տվյալ նպատակին հասնելու համար հոդվածում առաջադրվել են հետևյալ *խնդիրները*. ուսումնասիրել հանքարդյունաբերության ոլորտի ազդեցությունների կարգավորման օրենսդրական մեխանիզմները ՀՀ–ում, վեր հանել դրանցում առկա բացթողումները և մշակել առաջարկություններ դրանց վերացման ուղղությամբ: Հոդվածում առաջադրված խնդիրները լուծվել են նկարագրական, տվյալների հավաքագրման, համեմատական, վերլուծական մեթոդներով: Հոդվածի *գիտական նորույթը* կայանում է նրանում, որ ուսումնասիրելով ՀՀ շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա հանքարդյունաբերության ոլորտի թողած բացասական հետևանքների մեղմման օրենսդրաիրավական դաշտը, վեր են հանվել դրանցում առկա բացթողումները (հիմնախնդիրները) և առաջարկվել են դրանց վերացմանն (լուծմանն) ուղղված միջոցառումներ: Ուսումնասիրելով պետության կողմից շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա հանքարդյունաբերության թողած բացասական հետևանքների մեղմմանն ուղղված միջոցառումները, հանգեցինք այն եզրակացության, որ թերի և ոչ հստակ օրենսդրական դաշտը այն հիմնական պատճառն է, որ ոլորտում առկա են շատ բացթողումներ: Կարծում ենք, առաջին փուլով նախ պետք է մշակվի հստակ օրենք, որը

սահմանում է հանքերի անվտանգ շահագործման պայմանների խախտման համար սահմանված տույժ ու տուգանքները, ստեղծվի հատուկ վերահսկողական գործառույթներ իրականացնող մարմին, որն էլ անաչառ ձևով որոշակի պարբերականությամբ կիրականացնի մշտադիտարկումներ և վեր կհանվի հանքերի անվտանգ շահագործման նորմերի անհամապատասխանությունները, իսկ դրանց ժամանակին բացահայտումն ու շտկումը թույլ կտա հետագայում խուսափել ավելի մեծ խնդիրներից:

Բանալի բառեր. հանքարդյունաբերության ոլորտ, բացասական հետևանքներ, օրենսդրական կարգավորումներ, հանքերի շահագործում, շրջակա միջավայր, հետևանքների վերացման միջոցառումներ, օրենսդրահիրավական դաշտ, թափոններ, պոչամբարներ:

ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ ОСНОВЫ СНИЖЕНИЯ НЕГАТИВНЫХ ПОСЛЕДСТВИЙ ГОРНОДОБЫВАЮЩЕЙ СФЕРЫ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ В РА

Евгения Арташесовна Акопян
Анаит Хачатуровна Маркосян

Аннотация. Будучи одним из стратегически важных секторов РА, горнодобывающий сектор также имеет негативные последствия. Поэтому актуальным и необходимым является изучение мер и законодательных норм, направленных на снижение последних со стороны правительства РА, что и является целью статьи. Для достижения поставленной цели в статье представлены следующие задачи:

- изучить законодательные механизмы регулирования деятельности горнодобывающей промышленности в РА.
- выявить имеющиеся в них пробелы и разработать рекомендации по их устранению.

При решении задачи, представленных в статье, использовались методы сбора, анализа и сравнения данных.

Научная новизна статьи заключается в том, что после изучения нормативно-правовой базы смягчения негативного воздействия горнодобывающей промышленности на окружающую среду и здоровье населения РА были выявлены имеющиеся пробелы и предложены меры, направленные на их устранение. Изучая меры государства, направленные на смягчение негативного воздействия горнодобывающей сферы на окружающую среду и здоровье человека, мы пришли к выводу, что неполная и нечеткая правовая база является основной причиной наличия множества пробелов в отрасли. Полагаем, что на первом этапе должен быть разработан четкий закон, определяющий меры ответственности и штрафы за нарушение условий безопасной эксплуатации шахт, а также должен быть создан орган, выполняющий специальные контрольные функции, который будет беспристрастно осуществлять контроль через определенные промежутки времени и выявлять несоответствия нормам безопасной эксплуатации шахт, а их своевре-

менное выявление и исправление позволит избежать более серьезных проблем в будущем.

Ключевые слова: горнодобывающий сектор. негативные последствия, законодательные нормы, эксплуатация шахт, окружающая среда, рекомендации по устранению последствий, законодательство, отходы, хвосты.

LEGISLATIVE FRAMEWORK OF REDUCING THE NEGATIVE IMPACT OF MINING ON THE ENVIRONMENT IN RA

Yevgenya Artashes Hakobyan
Anahit Khachatur Markosyan

Abstract. Being one of the strategically important sectors of RA, the mining sector also has negative consequences. Therefore, it is **relevan**t and necessary to study the measures and legislative regulations aimed at reducing that negative aspects by the Government of RA, which serves as **the goal of this article**. In order to achieve that goal, the following **tasks** were set in the article: to study the legislative mechanisms of regulating the effects of the mining industry in RA, to highlight the existing gaps in that mechanisms and to develop recommendations for their elimination. The tasks set in the article were solved by implementing descriptive, data collection, comparative and analytical methods. **The scientific novelty** of the article lies in the fact that, after studying the legal framework of mitigating the negative impact of the mining industry on the environment and human health in RA, the existing gaps (problems) were highlighted and measures aimed at their elimination (solution) were proposed.

By analyzing the state's measures aimed at mitigating the negative impact of mining on the environment and human health, we came to the conclusion that the incomplete and unclear legal framework is the main reason that there are many problems in the sector. We believe that in the first stage, a clear legal bases must be developed, which will define the penalties and fines for violating the conditions of safe operation of mines, an inspection body that performs special control functions must be created. That state body will carry out an impartial monitoring of mining sector with certain intervals and will identify, discover the inconsistencies in the norms of safe operation of mines. The timely detection and correction of such issues will allow to avoid bigger problems in the future.

Keywords: mining sector, negative consequences, legal regulation, mine operation, environment, mitigation measures, legislative framework, waste, tailings.